ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԵՎՈՐԴ ՋԱՀՈՒԿՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս

1. ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՏԵՂ ԳՏԱԾ ՆՈՐԱՀԱՅՏ ԲԱՌԵՐԻ ՄԱՍԻՆ

Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանների ուսումնասիրությունը կարևոր նյութ է տալիս հայոց լեզվի պատմությանն ու ստուգաբանությանը։ Այս տեսակետից Հ. Ամալյանի «Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները» (Երևան, 1971) աշխատության և ապա «Բառագիրք հայոցի» քննական բնագրի հրատարակության (Երևան, 1975) նշանակությունը շատ կարևոր է։ Կարելի է ասել, որ Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը»[1] *մեծապես շահած կլիներ, եթե նման աշխատանք կատարված լիներ նախքան այդ բառարանի հրատարակումը. շատ բառեր կճշգրտվեին և կստանային ավելի հավաստի մեկնաբանություն։*

Իր աշխատության հավելվածում Հ. Ամալյանը միջնադարյան բառարաններից քաղել է բազմաթիվ նորահայտ կամ ճշգրտված բառեր։ Այստեղ հեղինակը նպատակ չի դրել ընդարձակ բառաքննական աշխատանք կատարել և բավարարվել է համառոտ ծանոթագրություններով, համեմատություններով, առանձին բառերի վերաբերյալ ստուգաբանական նշումներով։ Հետագայում իր կատարած նախնական աշխատանքը նա լրացրել է Երեմիա Մեղրեցու «Բառագիրք հայոցի» քննական բնագրի հրատարակության մեջ։

Հ. Ամալյանի բերած բառերի զգալի մասի բնույթն ակնհայտ է, այլ դեպքերում կարիք ունի մեկնաբանության։ Մեծ թիվ են կազմում հունարենից, լատիներենից և ուրիշ լեզուներից կատարված փոխառությունները, որոնցից մի քանիսը նշված են հեղինակի կողմից (ցավոք, կան վրիպումներ)։

Ներկա հոդվածում մենք նպատակ ունենք պարզելու որոշ բառերի ծագումը, ճշտելու առաջարկված որոշ ստուգաբանություններ և կատարելու բառաքննական այլևայլ դիտողություններ։

Ազեկայ. *արեգակն։—Բազեկայ «արեգակն» բառի սխալագրությունն է. այդ բառը հանդիպում է նաև* **բեզեկայ, բեզէկ** *«արեգակ»,* **բեզակ** *«փայլատակում» տարբերակներով։ Հ. Աճառյանը (ՀԱԲ, 1^2, էջ 495) աղբյուրն է համարում հուն.* βεζέκ-*ը, որ ծագում է եբրայերեն* bāzāq *«փայլակ» բառից։ Թեև* **ազեկայ** *եբրայերեն նշանակում է «արիություն», բայց Հ. Ամալյանի ենթադրությունը* **արիութիւն** *և* **արեգակն** *բառերի շփոթության մասին քիչ հավանական է։*

Առօք. *մինչև երեկոյ։—Կազմված է* **առ-** *նախածանցով՝* **օք** *«գիշերում, գիշեր, երեկո» արմատից։*

---

1 *Այսուհետև՝ ՀԱԲ։*

Աfսա. պճնեցեալ։—Հ. Ամալյանի ենթադրությամբ աղբյուրը լատ. exornō «պճնել» բառն է, որ անհավանական է։ Նկատի առնելով միջնադարյան բառարանների բացատրությունների մոտավորությունը՝ պետք է կարծել, որ բառի աղբյուրը հուն. ἄξιος «արժեքավոր» բառի իգական ἄξια ձևն է։

Բանչար. երաժշտական գործիք։ Բանչար. գործիք երգոց։— Ամենայն հավանականությամբ նույնն է հայ. բանդիռն, փանդիռն «թելավոր երաժշտական մի գործիք» բառի հետ, որ ծագում է փոքրասիական աղբյուրից և հատկապես հունարենի միջնորդությամբ (πανδοῦρα, πάνδουρον «երեքաղյան քնար») տարածվել է նաև այլ լեզուներում (ՀԱԲ, 6, էջ 1147—1148). սրանցից մեկը կարող է բանչար ձևի աղբյուրը լինել։

Իւբիլէօս. փող կամ զուռնայ։—Ըստ Հ. Ամալյանի՝ աղբյուրը հուն. ὀβολός «փող» բառն է։ Սակայն հուն. ὀβολός-ը նշանակում է «փոքր կշռաչափ. մանր փող (դրախմայի $^{1}/_{16}$ մասը)», որ չի կարող կապ ունենալ «փող կամ զուռնայ» մեկնության հետ։ Իրականում հայ. բառի աղբյուրը լատ. iubilaeus < հուն. ἰωβηλαῖος «հոբելյան» (> հայ. յոբելեան) բառն է, որ ծագում է եբր. jōbēl «խոյ» բառից. վերջինս հանդիպում է եբր. pərōth hajjōbelīm «խոյաշեփորներ», qeren hajobīl «խոյեղջյուր» կապակցություններում (խոյի եղջյուրով՝ ինչպես շեփորով, ազդարարում էին հանդեսի բացումը)։

Լակօնիայ. չարսաւ։—Աղբյուրն է լատ. lacinia «քղանցք. լաթ, կտոր. հագուստ» բառը։

Լուչ. կանաչ։—Անշուշտ, ծագում է հայերեն լուրչ «բաց կապույտ» բառից։ Գույների նման անցումները սովորական երևույթ են։ Ր-ի անկման համար հմմտ. խարշել-խաշել, fարշել-fաշել, դուրս-դուս և այլն։

Ոյագիօս. սուրբ։—Աղբյուրը հուն. ὁ ἅγιος «սուրբ» բառն է (ὁ-ն արական սեռի որոշիչ հոդ է)։

Պաժա. կապ։—Աղբյուրը հուն. πάγη «ցանց, ծուղակ, որոգայթ» բառն է։ Բառերի հնչյունական առնչության համար հմմտ. պաժիտ «թռչուն բռնելու ծուղակ»՝ հուն. παγίς,-ίδος «ծուղակ» բառից[2]։

Պարակղէտօս. մխիթարող։—Ըստ Հ. Ամալյանի՝ աղբյուրը հուն. παρήγορος «մխիթարող, մխիթարիչ» բառն է։ Սակայն այդ բառը ձևով շատ հեռու է պարակղետօս-ից և չի կարող նրա աղբյուրը լինել։ Պարակղէտօս-ը ծագում է հուն. παράκλητος «պաշտպան, մխիթարիչ» բառից։

Պեղագօս. մեծամեծք։—Հ. Ամալյանը կասկածով բխեցնում է լատ. permagnus «մեծամեծ» բառից՝ հաշվի չառնելով այլուր ավանդված պեղագօս «մեծ ծով» բառը, որ Հ. Հյուբշմանը և Հ. Աճառյանը (ՀԱԲ, 5, էջ 1016) բխեցնում են հուն. πέλαγος «ծով, բաց ծով» բառից։ «Մեծամեծք» բացատրությունը ակնհայտորեն սխալագրություն է։

Պօսել. սպրդել կամ խույս տալ։ Պօսպօսել. կեռ ի կեռ փախչել։—Այս բառերը արմատով նույնն են Հ. Աճառյանի (ՀԱԲ, 5, էջ 1121 և 1180—1181) բերած պօսիպօս և պօսպօսող բառերի հետ։ Առաջինը Հ. Աճառյանը համարում է անստույգ բառ (թեև հղում է պօսպօսող բառին), իսկ երկրորդը մեկնում է «կեղծավոր, խաբեբա, շողոքորթ» և բխեցնում արաբ. basbasa «շան՝ պոչը երկու կողմ շարժելով շողոքորթելը» բայից՝ միաժամանակ նշելով, որ

---

2 Պաժիտ բառի ստուգաբանությունը մերն է։

այն «ծագում է պօսպօսել բայից և արմատն է պօսպօս»: Պոսիպոս բառը Նորայր Բյուզանդացին («Արարատ», 1888, էջ 317) համեմատելով պօսպօ-սօղ-ի հետ, հնարավոր է համարում մեկնել երկու կերպ՝ կամ կցել բրբռ. պոսիպոս տալ «պատերի տակ կուչ եկած ման գալ» հարադրական բառաձևին, կամ համարել մի տեսակ խաղի անուն՝ ըստ Խաչատուր Կեչառեցու հետևյալ երկու գործածությունների.

«Ով վատշուէր Նենգդանեթոս,
Որ թագաւոր էիր յԵգիպտոս,
Ոչ թէ հզօր ձեռամբ հարուս,
Այլ լականովդ պօսիպօս»։
«Այս քեզ խրատ, Ալեքսանդրոս,
Որ չխաղաս այլ պոսիպոս»։

Պօսպօսդ բառի համար Հ. Աճառյանը հիշատակում է Ղարաբաղի բարբառի պօսպօս անել «այս ու այն կողմ պահվտել և թաքուն նայել», պոս տալ «աղվեսի՝ իր ետևից ընկած շների ձեռքից ազատվելու համար անակնկալ կերպով ուղղությունը փոխելով հանկարծ ուրիշ կողմ ցատկելը» և Կարնո բարբառի պօսել «թաքուն հեռանալ» բառերը։ «Հայերեն գավառական բառարանում» (1913, էջ 923) Հ. Աճառյանը որպես Ղարաբաղի բարբառին հատուկ ձև հիշատակում է նաև պոսպոս անել հարադրությունը՝ «դեսուդեն թաքնվելով՝ ծածուկ նայել» իմաստով։ Լոռու խոսվածքում կա պոս ըլել «վրիպել» բայը։

Վերևում բերված փաստերից բխում է, որ՝ 1) պետք է առանձնացնել պոս կամ պօս «շեղ, ծուռ, մտքով ծուռ, կեղծավոր» արմատը և նրանից բխեցնել հիշյալ բոլոր բառերը (պոսել, պոսպոսել, պոսիպոս), 2) հայերեն և արաբերեն բառերի նմանությունը լիովին պատահական է, և հայերենի պոս-ը չի կարող ծագել արաբ. բայից։

Պօփիւռիփօնոս. քնարերգ։—Ակնհայտորեն հունական ծագում ունի, թեև ենթադրական *πορφυρόφωνος սկզբնաձևը մեզ հայտնի բառարաններում չի ավանդված։ Եթե առաջին բաղադրիչն աղավաղված չէ և ծագում է πορφύρα (հուն. πορφύρη) «պորփյուր, ծիրանաքար» բառից, ապա ողջ բարդությունը պիտի նշանակած լինի «պորփյուրաձայն, պորփյուրե գործիքի արձակած ձայն ունեցող»։

Ջալամուկ (Ջալամ, որ է ջալամու հաւ)։—Նույնն է ջայլամի անվան հետ, որ հնում ավանդված է ջայլեամն, ջայլամն, ավելի ուշ ջալամ ձևով (այ>ա հնչյունափոխությամբ), -ուկ-ը փոքրացուցիչ-փաղաքշական ածանց է։

Սալար. գաղտուկ։—Հ. Աճառյանը (ՀԱԲ, 6, էջ 24—25), բերելով սալարիլ «վախից կամ ամոթից պահվտիլ, մի տեղ ապաստանիլ», սալարկել «ծածկել, պահել» և Երեմիայի բառարանի սալարիլ «զօրիլ կամ սարսիլ» բառաձևերը, գրում է. «Բոլորի արմատն է սալար «ծածուկ», որ թեև ավանդված չէ մատենագրության մեջ, բայց պահված է Հաճընի գավառականի մեջ՝ սալօյ «ծածուկ, գաղտնի» ձևով, որ ձայնաբանորեն հառաջանում է սալար ձևից»։ Այժմ մենք ունենք սալար բառի՝ Հ. Աճառյանի կողմից նշված իմաստի մի որոշակի վկայություն, որ հաստատում է այդ բառի՝ մեր ստուգաբանությունը (ՊԲՀ, 1965, էջ 260)՝ սալ-<հ.-ե. *k′əl- (հմմտ. հ. հնդկ. śaraṇá- «ծածկե-

լով, պահելով», լատ. cēlō,-are «ծածկել, թաքցնել, պահել», հ. վ. գերմ., հ. անգլ. helan «թաքցնել» և այլն)։

Սիկիրա. *արբեցութիւն։ Ամենայն հավանականությամբ ծագում է հուն.* σιχέρα *կամ* σίχερα *«հացից կամ պտուղներից պատրաստված գինի» բառից, որ իր հերթին ծագած է համարվում եբրայերենից։*

Սփիինքս:—*Հանդիպում է* ուփարալ *բառի մեկնության մեջ՝ «ուփարալ. սփիինքս, որ է սմպուլ մարգարիտի հետ ելանէ»։ Ծագում է հուն.* σφιγγίον *(հգն.* σφιγγία) *«ապարանջան» բառից։*

2. ԱՅԼ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա(ղ)խաղան

Հ. Աճառյանը (ՀԱԲ, 1^2, էջ 132) իբրև աղբյուր նշում է Գ. Փեշտմալճյանի «Բառագիրք հայկազյան լեզվի» (Ա, Կ. Պոլիս, 1844) ու Ս. Գաբամաճյանի «Նոր բառագիրք հայերեն լեզվի» (Կ. Պոլիս, 1892, 2-րդ հր., 1910) աշխատությունները և տալիս «գանակոծելու գործիք, ֆալախկա» իմաստը։ Ստուգաբանության որևէ փորձ չի կատարված։

Բառի կազմությունը հասկանալու բանալի է տալիս կախաղան *բառը, որ կազմված է* կախ-ել *բայից՝ այլուստ անծանոթ* -աղան *ածանցով.* -աղան-*ը իր բնույթով ու գործածությամբ շատ մոտ է* -արան *ածանցին (հմմտ.* կախաղան-կախարան *զույգերը՝ իմաստային տարբերակմամբ)։ Այս դեպքում* ա(ղ)խաղան-*ը պետք է կազմված լինի* ա(ղ)խ-ել *բայից. այդ բայն իրոք գոյություն ունի* աղխել, ախել *կրկնակ ձևերով և նշանակում է «փակել»* (աղխ *կամ* ախ *«փականք. օղակ» արմատից, որ ստացել է նաև իմաստային այլ առումներ)։ Ինչպես հայտնի է,* աղ(խ)աղան-*ը (ֆալախկան) մի գործիք էր, որի մեջ փակում-օղակում էին պատժվողի ոտքերը՝ գանակոծելու համար։ Ստ. Մալխասյանցը («Հայերեն բացատրական բառարան», 4, 1945, էջ 478)* փալախկան *(=*ֆալախկա) *բացատրում է որպես «թոկ՝ երկու ծայրը մի ձողի վրա ագուցված, որի մեջ մեկի զույգ ոտքերը կաշկանդելով վեր են բարձրացնում գավազանի հարվածներ տալու համար»։*

Այսպիսով, աղ(խ)աղան *բառը պետք է հանել արմատական բառերի թվից և դնել* ա(ղ)խ *արմատի տակ։ Այն ակնհայտորեն կազմված է* կախաղան *բառի նմանակությամբ։*

Ընչուղ

V դ. ավանդված այս բառը նշանակում է «երինջ, մեծ հորթ»։ Առաջարկված ստուգաբանությունները խիստ հեռու են հավանական լինելուց (տե՛ս ՀԱԲ, 2^2, էջ 131)։

Անհնար չէ ընչուղ-*ը կապել* անղի, անդեայ *«նախիր, հոտ» բառերի հետ և նույնպես բխեցնել հ.-ե.* *andh- *«բողբոջել, ծաղկել» արմատից, որտեղից ծագում են կիմր.* enderig *«ցուլ, եզ»,* anner *և բրետ.* ounner *«երինջ» բառերը։* *Andhi̯- > ընչ- *անցման համար հմմտ.* *anti > ընդ: *Եթե այս ստուգաբանությունը ճիշտ է, ապա* անղի-*ն և* ընչուղ-*ը իրենց հերթին կապվում են* անդ *«արտ, հանդ, անդաստան» բառի հետ։*

Երիկամն

V դ. հանդիպող և այժմ էլ լայն գործածություն ունեցող այս բառը բացի իր բուն իմաստից («պոլոճիկ, почки») հանդես է եկել նաև ավելի լայն «ներքին օրգաններ» և փոխաբերական «ներքին զգացմունք, սրտի գաղտնիքներ» ու «այարարտություն, ճարպ» իմաստներով։ Սովորական է հոգնակի ձևը՝ ըստ նշանակվող առարկայի բնույթի (զույգ երիկամներ նշանակելու)։ Եթե մի կողմ թողնենք հայ. երի բառից բխեցնելու (Տերվիշյան, Կարստ) և շումեր. ur «կողեր», gur «կողմ» բառերի հետ կապելու (Կարստ) անհաջող փորձերը, ապա կարելի է մատնանշել Ն. Մառի համեմատությունը վրաց. tirkmeli հոմանիշի հետ («Известия АН», 1915, էջ 771)։ Վերջինիս կապակցությամբ Հ. Աճառյանը (ՀԱԲ, 2^1, էջ 56) գրում է. «Հայ. բառի նախաձևն է երէկամ, որ կարող է ավելի հին *բրէկամ ձևից հառաջացած լինել. այս պարագային հայն ու վրացին իրար հատկապես նման են դուրս գալիս»։

Եթե հայերեն ու վրացերեն բառերն իրոք կապված են, իսկ դա շատ հավանական է, ապա կարելի է անել երեք ենթադրություն. 1) հայերեն բառը փոխառություն է վրացերենից. 2) վրացերեն բառը փոխառություն է հայերենից. 3) վրացերենը և հայերենը բառը փոխ են առել մի երրորդ լեզվից։ Առաջին ենթադրությունը անհավանական կթվա, եթե նկատի առնենք, որ վրացերեն բառը քարթվելական այլ լեզուներում զուգահեռներ չունի և վրացերենի տվյալներով հավաստիորեն չի ստուգաբանվում։ Իհարկե, հնարավոր է, որ վրացերենն այս բառը փոխառած լինի կովկասյան աղբյուրից և իր հերթին տված լինի հայերենին, սակայն այդ դեպքում փոխառությունը պետք է նախորդած լինի հայերենի *tr->(e)r- հնչյունափոխությանը, որ քիչ հավանական է։ Վրացերեն բառի աղբյուր կարող էր համարվել լեզգ. теукІун (ախտ. բրբռ.) дуркІун բառաձևերին մոտ մի ձև, մանավանդ որ դաղստանա-նախյան ձևերի ծագումնաբանական կապը հավանական է, և ընդհանրությունը կարելի է հասցնել միասնության շրջանը[3]։ Սակայն նմանությունը պատահական կդառնա , եթե նկատի առնենք լեզգ. ձևերի դրափոխված լինելը ավելի հին ձևերի նկատմամբ (հմմտ. թաբ. гурдум, ուտ. гурдак և այլն)՝ թերևս հենց վրաց. ձևի ազդեցությամբ։ Այս դեպքում պետք է բացառել առաջին ենթադրությունը։ Երրորդ ենթադրությունն ընդունելու դեպքում նույնպես պետք է կարծել, որ հայերենը փոխառությունը կատարել է նախքան *tr->(e)r- հնչյունափոխությունը, որ դարձյալ քիչ հավանական է։

Վրացերեն բառի՝ հայերենից փոխառյալ լինելու ենթադրությունը կհաստատվի, եթե ապացուցվի հայերեն բառի հնդեվրոպական ծագումը։ Հնդեվրոպական լեզուները չունեն երիկամի ընդհանուր անվանում։ *Neg^{u}h-ro-s ձևը նշանակում է ոչ միայն «երիկամ», այլև «ամորձիք». այն վկայված է միայն հուն., իտալ. և գերմ. լեզուներում և բխում է *(e)neg^{u}h- «ուռուցք, այտուցք. աճուկ» արմատից. դեռ ավելին. բուն լատիներենը այն փոխարինել է անծանոթ ծագման renes հոմանիշով։ Հ.-ե. ուրիշ լեզուներ երիկամը նշանակում են սեփական կազմություններով. այսպես, ռուս. почка (հգն. почки) «երիկամ» բառը կապում են կամ печь «եփել, խորովել» (հմմտ. печень

---

[3] Հմմտ. С. М. Хайдаков, Сравнительно-сопоставительный словарь дагестанских языков, М., 1973, стр. 41.

«լյարդ»), կամ, որ ավելի քիչ հավանական է, почка «բողբոջ» (ուկր. почки «ներքին օրգաններ. դդումի սերմեր»)[4] բառերի հետ։

Հայերեն Երիկամն-ի էրիկ-ը, վրացերենը նկատի առնելու դեպքում, ենթադրում է հ.-ե. *treig- / troig- նախաձև. այս առումով հայերեն բառը ամենից ավելի հավանական է համեմատել սկզբնապես «մեջտեղ, միջուկ, ներքին մաս, սիրտ» իմաստն ունեցող ձևից ծագող հ. պրուս. strigeno «ուղեղ» նախասլավ. strьzenь, strьženь «մեջտեղ, խորք, հում» բառերի հետ, որ բխեցնում են հ.-ե *(s)ter- «շերտ, գիծ, շառավիղ, ճառագայթ» արմատից[5]։

Լաս

Բարբառային այս բառը, որ Ղարաբաղի բարբառում ունի –տ հավելվածային հնչյունը (լաստ), նշանակում է «հնձված խոտի կամ հաշանի շերտ. հոսելիի՝ միանգամից առած խոտի քանակություն. խոտի կամ հաշանի փոքր դեզ, բարդ»։ Մինչև այժմ որևէ ստուգաբանություն չի առաջարկված։ Ձևով և իմաստով շատ մոտ է օսերեն lasaeg «խոտի դեզ» բառին, որ Վ. Ի. Աբաեը[6] բխեցնում է lasyn «կրել, տանել» բայից (ինչպես «կրվող, տարվող բան», հմմտ. հայ. բերել և բարդ) և վերջինս էլ ծագած համարում իրան. *nas- «վերցնել» նախաձևից. *nas-ը սկսնական կերպաձևն է *nam- արմատի, որ գալիս է հ.-ե. *nem- «տալ, բաժին հանել. վերցնել» նախաձևից։ Եթե այս ստուգաբանությունը ճիշտ է, ապա հայ. լաս-ի համար պետք է ենթադրել իրանական, այն էլ օսերենին մոտ (թերևս սկյութական կամ ալանական) աղբյուր և բացառել կապը լաստ «իրար կապված գերանների շարք՝ ջրով մարդ կամ բեռ տեղափոխելու համար», լաստենի «մի տեսակ ծառ» բառերի (որոնց և բալթիական լեզուների՝ լիտվ. lazda «արքայակաղնի. փայտի կտոր», լատվ. la(g)zda «արքայակաղնի» բառերի միջև հատուկ զուգաբանություն են տեսնում) և, հետևաբար, հ.-ե. *leg′- կամ *les- «հավաքել» արմատների հետ (առաջին դեպքում *ləg′dā > լաստ, երկրորդ դեպքում՝ lazdā > լաստ)։ Երկու դեպքում էլ կասկածելի է մնում լաս ձևը, որի ս-ն չէր կարող անմիջաբար ծագել *s-ից, քիչ հավանական է նաև այն *g′-ից բխեցնելը (հ.-ե. *g′ > հայ. ծ, բացի ես և ասել բայերից, որոնց մեջ հատուկ շեղումով *g′ > ս)։ Օս. n > l փոփոխության համար հմմտ. նաև օս. malusxg «ձյունածաղիկ» իրան. աղբյուրից փոխ առնված հայ. մանուշակ-ի դիմաց։ Այս կապակցությամբ հետաքրքրական է նշել, որ նույն Աբաեը օս. lxzaeg «փայտ, գավազան» բառը բխեցնում է հայ. լծակ բառից կամ laštyaka- սկզբնաձևի միջնորդությամբ համեմատում լիտվ. հիշյալ lazdā բառի հետ։

Կտաւ

Հին ժամանակներից ավանդված և բարբառներում լայն տարածում ունեցող այս բառի մասին Հ. Աճառյանը (ՀԱԲ, 2[2], էջ 675) գրում է. «Ծագումն անհայտ է. հայերենի հետ նմանություն ունեցող ձևերը մեզանից են փոխառյալ. այս իրողության հետ լավ է պատշաճում այն հանգամանքը, որ

---

[4] М. Фасмер, Этимологический словарь русского языка, 3, М., 1971, стр. 348.

J. Pokorny, Indogermanisches etymologisches Worterbuch, I, Bern-München 1950. S. 1029.

[6] В. И. Абаев, Историко-этимологический словарь осетинского языка, II, Л., 1973, стр. 13.

կտավի բույսը գիտության մեջ համարվում է կովկասյան ծագումից. հավանաբար իր օրրանն է Հայաստանը, որտեղից տարածվել է Եվրոպա և Արևելք (տե՛ս Արթինյան, Աստվածաշունչի տունկերը, էջ 154 և 155)։ Այս իրողության վրա հիմնվելով՝ կարելի՞ է արդյոք կտաւ բառը մեկնել իբրև զուտ հայերեն ածանց՝ կուտ բառից. (այսպես կոչված իր պարունակած բազմաթիվ կուտերի պատճառով, որոնք ծանոթ են կտաւատ անունով և որոնցից պատրաստում են կտավաձեթը)։ Նկատելի է մի հանգամանք, որ այսօր էլ Նոր Նախիջևանի բարբառում կտավատը բացատրվում է ճուճդ բառով, որ հոմանիշ է կուտ բառին. ասում են սովորաբար ճուճդ ցանել «կտավատ ցանել»։

Այժմ կարելի է բերել մի ապացույց ևս կտաւ բառի՝ կուտ բառից ածանցված լինելու մասին։ Կովկասյան լեզուներից ավարա-անդա-ցեզական լեզուներում «սերմ» և «կտավ» նշանակող բառերը միևնույն ծագումն ունեն (հմմտ. ավար., բեժ. лъелъ)[7]։ Այսպիսով, կտաւ-ը չպետք է առանձնացնել իբրև արմատական բառ, այլ միացնել կուտ բառի հետ։ Այս բառը Հ. Աճառյանի կարծիքով հայերենին է անցել ուրարտերենից, բայց ըստ մեր ստուգաբանության բնիկ հայերեն է և գալիս է հ.-ե. *gudo- ձևից[8]։

Մռութ, մռուտ, մռուզ

Մռութ «1. դունչ, քիթ-բերան (վիրավորական), 2. ստորին շրթունք» բառը լայն տարածում ունի բարբառներում, բայց մատենագրական հին վկայություններ չունի։ Անշուշտ, ծագումնաբանորեն սրա հետ նույնն են մռուտ (ՀԱԲ, 4, էջ 1187, «անհայտ իմաստով մի բառ, որ իբրև մակդիր տրված է Սահակ անուն անձին») և մռուղ (մռուզ, մռուճչ, ՀԱԲ, 4, էջ 1186, ունի երկու վկայություն ու նշանակում է «ուռած և ցայտուն կզակով») բառերը, որոնք գործածված են ածականաբար. բարբառներում մռութ բառը ևս կարող է գործածվել որպես մականուն՝ «մռութը կիտած, մռայլ» իմաստով։

Այս առումով ճիշտ չէ Հ. Աճառյանը, որ (ՀԱԲ, 7, էջ 168) մերժում է Հ. Տաշյանի կարծիքը մռուղ և մռութ բառերի կապի մասին։ Դեռ ավելին. սրանց պետք է միացնել նաև մռուզ «բեղ, ընչացք» բառը։

Մռութ և, ամենայն հավանականությամբ, մռուտ, մռուղ, մռուղ, մռուճչ բառերը ծագում են հ.-ե. *mu- բնաձայնական արմատից (տարբեր աճականներով), որ ունի «մռմռալ, մռթմռթալ, քրթմնջալ. լուռ, մունջ. դեմք, մռութ, բերանը փակ պահել» իմաստները։ Այս նույն արմատից է ծագում մունջ բառը[9], որի՝ նախորդ բառերի հետ ունեցած կապի մասին վկայում է մռունջ «լուռ» (Թբիլիսիի բարբառ) բառը։ Այս բառերին միանում են մռմռալ, մռթմռթալ, մռունչ բնաձայն բառերը (մռտ-<*mus-ro-?)։ Մռութ, մռուզ բառերի իմաստների համար հմմտ. հ.-ե- *mu-ից ծագող հ. վ. գերմ. mula «մռութ» հ. իսլ. mūli «մռութ, կենդանիների վերին շրթունք» լիտվ. mute

---

7 Հմմտ. С. М. Хайдаков, նշվ. աշխ., էջ 60։

8 Գ. Բ. Ջահուկյան, Ստուգաբանություններ («Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 1, էջ 257—258)։

9 Հ. Աճառյանը (ՀԱԲ, 4, էջ 1162) հետևելով Ս. Բուգգեին, տալիս է *mundl̥o- սկզբնաձևը, բայց *dl̥-ն հայերենում ջ-ի չի փոխվում. պետք է ենթադրել *muntlo- կամ mundhl̥o- սկզբնաձև։

«մռութ» և այլն։ Եթե ճիշտ են ռուս. морда «մռութ» բառի համար առաջարկված ստուգաբանությունները[10], ապա այն կապ չունի հայ. բառերի հետ։

Մուլ

Այս արմատը պահպանված է բարբառային հետևյալ բառերում՝ մլալ «հանդարտ՝ առանց բոցի այրվել. ծխալ, մխալ», մլմլալ «հանդարտ բարձրանալ (ծխի մասին). առկայծել (ճրագի մասին). հանդարտ այրվել, մարմրել (կրակի մասին)», մլլալ «հանդարտ բարձրանալ (ծխի մասին). հոտ արձակել, բուրել», մլիկ-մլիկ «հանդարտ այրվելով, մլմլալով»։ Թերևս այս նույն արմատն է հնից ավանդված և բարբառներում պահպանված մլար «աչքի մշուշ» բառի մեջ, թեև Հ. Աճառյանը (ՀԱԲ, 4, էջ 1182) այն համարում է մռայլ բառի դրափոխված ձևը։ Մուլ- արմատը, անշուշտ, հնդեվրոպական ծագում ունի և գալիս է *smel- «դանդաղ և ծխալով այր(վ)ել, մլմլալ, անբոց այրվել» արմատի *smōl- ձայնադարձային ձևից. հմմտ. միջ. իռլ. smāl, smōl-, smual «կրակ, մոխիր», մ. նիդեռլ. *smölen, նիդեռլ. *smeulen «մլմլալ, ծխալով այրվել», մ. անգլ. smel, smul «հոտ», անգլ. smell «հոտ. հոտ քաշել, հոտ արձակել» և այլն։

Պիծառ

Պիծառ «մի քիչ, փոքր ինչ». մատենագրության մեջ հանդիպում է XIV դ., Գրիգոր Տաթևացու մոտ. «Գրեալ է ի թագաւորութիւնս թէ Յովնաթանու աչքն ոչ կարէր տեսանել ի սովու և առեալ ի մեղրէն պիծառն և եկեր և բացաւ աչքն իւր»։ Հ. Աճառյանը (ՀԱԲ, 5, էջ 1048—1049) բարբառային պծար, պձառ, փցար, պծառ ձևերի հիման վրա որոշում է վերևում բերված իմաստը և միաժամանակ հիշատակում ասոր. bəşar «նվազ, պակաս» բառի հետ ունեցած պատահական նմանությունը։

Բառիս աղբյուրը, անշուշտ, կովկասյան, հատկապես դաղստանյան լեզուներն են. հմմտ. հատկապես թաբաս. бицlи, ագուլ. бицlиф «փոքր», որոնք զուգահեռներ ունեն կովկասյան այլ լեզուներում (անդ. мичlи, խվար. мицlklири, լակ. бетla և այլն)։ Կովկասյան զանազան աղբյուրներից են ծագում թերևս նաև բարբառային պիծի, պիծիկ, պիծիճ, պիծոճի ձևերը, որոնք Հ. Աճառյանը («Հայ. գավառական բառարան», էջ 925), միացնում է պուճուր, կուճուր, պիճի, պիճիկ և այլն ձևերի հետ՝ մատնանշելով յակուտ. bičikan «շատ փոքր», bečekan «պստիկ, փոքր տղա. մի քիչ»[11], ուտ. klицlи «փոքրիկ» և քրդ. kuǰur «կարճահասակ, գաճաճ» բառերը։ Հնարավոր է ենթադրել մանկալեզվական ընդհանուր հիմք։ Թեև Հ. Աճառյանը (ՀԱԲ, 5, էջ 1035—1037) սրանցից առանձնացնում է պզտիկ (բարբառներում պզտիկ, պստիկ, պտիկ, պատիկ, փստլիկ և այլն) բառը և իբրև աղբյուր նշում պրսկ. past, pest «1. ցած, կարճահասակ, կարճ. 2. ցած, անարգ, ստոր» բառա-

---

[10] Հմմտ. А. Преображенский, Этимологический словарь русского языка. М., 1910—1914, էջ 555—556; М. Фасмер, նշվ. աշխ., 2, М., 1967, էջ 652—653։

[11] Մ. Վ. Իլլիչ-Սվիտիչը մոնղ. (գր.) bicl-qan «փոքր» բառի արմատը հատկացնում է նոստրատիկական blca «փոքր» արմատին՝ հենվելով ուրալյան, դրավիդյան և ալթայան լեզուների տվյալների վրա. Կովկասյան զուգահեռները չեն մատնանշվում (М. В. Иллич-Свитыч, Опыт сравнения ностратических языков, М., 1971, стр. 178).

ձևերը, բայց առկա է իմաստային և հնչյունական զգալի տարբերություն, և թերևս հայ. բառը պետք է միացնել վերևում բերված ձևերի հետ։

Ռումբ

Այս բառը հնում ունեցել է «նետելու բան» իմաստը, մասնավորապես «1. նետելու քար, նետելու ռումբ. 2. տեգ, նիզակ»։ Առանձին գործածված գտնում ենք համեմատաբար ուշ շրջանում՝ ռումբ, ըռումբ, ըռում *գրություններով։ V գ. հանդիպում է միայն բաղադրությունների կազմում՝* ռմբաճար *«քարբան, քարբանով նետելու քար»,* ռմբատր *«նիզակավոր»։ Հին հայկազյան բառագրքում տրված են նաև* ըռմբարտակ, ըռմբկէն *բառերը։ Արդի գրական լեզվում* ռումբ *բառն ստացել է ռազմական որոշակի տերմինի արժեք՝ ռուս.* бомба *բառի իմաստային բոլոր առումներով։*

Մի կողմ թողնելով լատ. rumpo *«խորտակել», հուն.* 'ρήγνυμι *«խորտակել, շարդել» («Նոր բառագիրք հայկազեան լեզուի») և հայ.* բուռն *(Հյունքարպեյենտյան) բառերի հետ կապելու փորձերը՝ հիշատակենք Հ. Հյուբշմանի և Հ. Աճառյանի բերած զուգահեռները։ Հյուբշմանը 1882 թ.* ռումբ-*ը կապելով արաբ.* runib *«նիզակ» բառի հետ, հետագայում ինքը մերժում է ինչպես այս, այնպես էլ ասոր.* rumxa *«աշտե» բառերի հետ առնչելու հնարավորությունը։ Աճառյանը (ՀԱԲ, 5, էջ 1286) պատահական է համարում \վրաց.* rumbi *«1. խորանարդ, 2. տիկ» բառի հետ ունեցած նմանությունը։*

Եթե նկատի ունենանք ռ-*ով սկսվող բառերի՝ գերազանցապես փոխառյալ լինելը (հայտնի է միայն մեկ՝ քիչ թե շատ հավաստի բնիկ բառ՝* ռունգն*), ապա հավանական կլինի* ռումբ *բառի աղբյուրը փնտրել V դ. ոչ շատ առաջ հայերենի հետ շփված լեզուների մեջ (ավելի վաղ փոխառություններում բառասկզբի* r*-ն հայերենում արտացոլված է սովորաբար* եր*-ով)։ Այդպիսին պետք է համարել, ամենայն հավանականությամբ, հուն* ρόμβος *բառի* 'ρόμβος *տարբերակը. հուն.* ν*-ն հայերենում կարող է արտացոլվել որպես* ու *(հմմտ.* σμύρνα > զմուռն, σμύρρα > զմուռ(ս), μαρτύριον > մատուռն *և այլն). հազվադեպ հուն.* ο*-ն նույնպես կարող է* ու *դառնալ։ Հուն. բառը նշանակել է նախ «պտույտ, շրջանաձև շարժում», ապա («պտտվող, կլոր բան» իմաստի մասնավորմամբ) «հոլ. կախարդական անիվ, դափ. (մաթ.) ռոմբ»։*

Հ. Աճառյանի հիշած վրաց. բառը ակնհայտորեն փոխառյալ է հունարենից, ինչպես նշված է, օրինակ, Ն. Չուբինաշվիլու բառարանում[12]*։*

Հայերեն բառն, ամենայն հավանականությամբ, արտացոլում է հունական 'ρόμβας, 'ρύμβος *բառի՝ մեզ ծանոթ բառարաններում չարտացոլված որևէ մասնավոր իմաստ, որի գոյության մասին վկայում է* 'ρυμβονάω *«թափահարել, նետել, շպրտել» սակավ գործածական բայը*[13]*։*

Սիղեղատր

«Յաճախապատում ճառք» ժողովածուի (Վաղարշապատ, 1894—96, էջ 202) «Ոխութիւն և նախանձ և ատելութիւն, որ թէ ոչ ազատեսցի յայսոցիկ չարեաց, մահ անձին և այլոց ստանայ. զի քինայ և զչարի ի խորհուրդս մե-

[12] *Հմմտ.* N. Čubinašwili, Kartuli leksikoni, Tbilisi, 1961, *էջ 336*։

[13] *Հմմտ.* H. Frisk, Griechisches etymologisches Wörterbuch, II, Heidelberg, S. 649.

ղաւորս և զթոյնս դառնութեան հեղու» հատվածը երկու հնագույն ձեռագրերի մեղաւորս բառի փոխարեն երկու այլ ձեռագրերում ունի ղեղաւորս և երկու ոչ հին ձեռագրերում՝ սիղեղաւորս ձևերը։ Հ. Աճառյանը (ՀԱԲ, 6, էջ 226) որպես անստույգ բառ առանձնացնում է սիղեղաւոր-ը՝ մեկնելով «չար, մեղանչական»։ Նա չի նկատել, որ այս բառի արմատը նույնն է սեղեխ բառի հետ, որ գրված է նաև սեղեղ, սիղեխ, սիղեղ և նշանակում է «շնացող մարդ, սիրական» (ՀԱԲ, 6, էջ 177)։ Այսպիսով, սիղեղաւոր բառը լիովին հնարավոր է և եթե նույնիսկ մեղաւոր-ի ղեղաւոր սխալագրության հետ կապված հետագա գիտակցական վերականգնում է, ապա այնուամենայնիվ ածանցված է սիղեղ (սեղեխ) բառից։ Մեր «Хайасский язык и его отношение к индоевропейским языкам» աշխատության մեջ (Երևան, 1964, էջ 50) սիղեղ-ը (սիղիղ, սիղեխ, սիղէխ) բխեցված է հայասական Šillili... աստծու անունից և նշված է, որ բառը հետագայում բացասական երանգ է ստացել։

Փառ

Բարբառներում լայնորեն տարածված այս արմատը մատենագրության մեջ հիշատակված է համեմատաբար ուշ շրջանում և ունի «զգեստ, շապիկ. ընկերք. ձվի միջի մաշկ» իմաստները (բարբառներում՝ «թաղանթ, բարակ մաշկ, փառ»)։ Հ. Աճառյանը (ՀԱԲ, 6, էջ 1155—1156), համեմատելով վրաց. parwa «ծածկել, պահել, պահպանել, պաշտպանել», paruli «ծածկել», sa-parebeli «ծածկոց» և այլն բառերի հետ, ենթադրում է երկու լեզուների համար մի երրորդ աղբյուր՝ ուրարտերենը։

Իրականում, ըստ Բեյլիի, գործ ունենք իրանական փոխառության հետ։ Իրանական par-, parwa- հիմնաձևերը պահպանված են, օրինակ, օսերենում՝ p'arəe, p'arwəe «բարակ մաշկ, թաղանթ, թեփ» բառերում։ Վ. Ի. Աբաևը նկատի ունենալով ընիկ իրանական բառերում p'-ի արտասովոր լինելը, կասկածի տակ է առնում օսերեն բառերի բեյլիյան ստուգաբանությունը, բայց ինքն էլ համեմատում է սլավոնական *pelva- (այստեղից ռուս. плева «թաղանթ, մաշկ») նախաձևի հետ[14] և դրանք դիտում որպես սկյութա-սլավոնական հին զուգաբանություն։ Մինչդեռ սլավոնական ձևը ծագում է հ.-ե. *pel-u̯o- նախաձևից՝ (*pel- «ծածկել, փաթաթել»), որից կարող էր ծագել իրանական parwa-ն (*pel-ից էլ *par-ը)։

ЭТИМОЛОГИИ

ГЕВОРК ДЖАУКЯН

Академик АН Арм. ССР

Резюме

Статья содержит этимологические заметки о новооткрытых словах из средневековых армянских словарей и о словах, нашедших место в «Этимологическом корневом словаре» Р. Ачаряна, но не имеющих надежной этимологии: 1) azekay «солнце» (ошибочное написание bazekay

---

14 В. И. Абаев, նշվ. աշխ., էջ 249։

„солнце“), arot‘ „до вечера“ (ar „при, под, к, до“, ot‘ „ночевка; ночь, вечер“), ak‘sa „украшенный“ (греч. ἄξια „ценная, достойная“), banǰar (музыкальный инструмент<?; ср. греч. πανδοῦρα „цитра“, арм. p‘andirn), Iwbiłeos „рог, труба, горн“ (<лат. iubilaeus<греч. ἰωβηλαῖος „юбилей“< др. евр. yobēl „рог, труба, горн“), lakonlay „покрывало, простыня“ (лат. lacinia „тряпица, платок, платье“), luǰ „зеленый“ (<арм. lurǰ „синий, голубой“), oyagios „святой“ (<греч. ὁ ἅγιος „святой“). raža „связь, связка, повязка, узел“ (греч. πάγη „силок“; ср. pazit „силок“ <греч. παγίς,-ίδος), parakletus „утешитель“ (<греч. παράκλητος „защитник, утешитель“), pelagos „великие?“ (=pelagos „большое море“ <греч. πέλαγος „море, открытое море“), posel „вкрадываться, прокрадываться, избегать“ и posposel „криво убегать“ (следует присоединить к bosipos „?“, pospososł „льстивый, вкрадчивый“ диал. pospos anel „скрываться и вкрадчиво смотреть“, pos tal „убегать, избегать“ и выделить общий корень pos „кривой, вкрадчивый, льстивый“), porp‘iwrop‘onos „лирика, лирическая песня“ (<греч, *πορφυρόφωνος), ǰalamuk (=ǰaylam „страус“), salar „тайно“ (корень глаголов salaril „скрываться“, sałarkel „скрывать“ < и.-е. *k'əl-), sikira „пьянство“ (<греч. σιείρα, σίκερα „хлебное или фруктовое вино“), sip‘ink‘a (<греч. σφιγγίον, мн. ч. σφιγγία „ожерелье“. 2) a(ł)xłan (орудие наказания: деревяжка, к которой привязывали ноги и били палками по пяткам—от a(ł)xel „закрывать, запирать“, a(ł)x „запор, замок; петля“; ср. kaxałan „виселица“ от kaxel „вешать“), ənǰuł „телка“ (вместе с andi, andeay „стадо“, and „нива“ восходит к и.-е. *andh „всходить, распускаться, цвести“, откуда кимр. enderig „бык“, брет. ounner „телка“; для *a>ə ср. *anti>ənd), erikamn „почка“ (ср. др. прусс. stigeno „мозг“, слав. *strъženь „середина, глубина, русло“; из армянского груз. tirḳmeli „почки“), las „ряд скошенной травы или хлеба; копна; скирда“ (ср. осет. lasəeg „копна“?), ktaw „холст“ (от kut „семя, зерно, косточка“; ср. аваро-андо-цезские языки, в которых „семя“ и „лен“ обозначаются одними и теми же словами), mrut, „морда“ (mrut, mruz) (и.-е. *mu- откуда литв. mute „морда“), mul- (диал. mial, mimial „тлеть, гореть без пламени“ (и.-е. *smol- от *smel-), picar „немного“ (из дагестанского источника; ср. табас. *бицӏи* „маленький“), rumb „кидаемое: кидаемый камень; копье, бомба“ (<греч. ῥύμβος, при ῥόμβος; ср. ῥυμβονάω „махать, кидать, бросать“), p‘ar “одежда, рубаха, оболочка, пленка“ (ср. осет. p‘are, p‘arwəe „кожица, чешуя“).